

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԷՆ

31 Հոկտեմբերի - Ֆրանկֆուրթի Հայ Մշակութային Միությունը նշեց իր հիմնադրության 40 -ամեակը դասական երաժշտական համերգով մը: Համերգը տեղի ունեցավ Գերմանիոյ Խնայողական Մնտուկի տնօրինության տրամադրած բանախօսությանց սրահին մէջ, որուն ներկայ էին առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեան շրջանի հոգեւոր հովիւ Հոգեշ. Տ. Սերովբէ վրդ. Բախանեանի ընկերակցութեամբ, ինչպէս նաեւ Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդի ատենապետ տոքթ. Շաւարշ Յովասափեան եւ հոծ բազմութիւն մը:

Նախքան համերգի սկսիլը առաջնորդ Սրբազան խօսք առնելով ողջունեց ներկաները, իր գոհունակութիւնն ու շնորհաւորութիւնները յայտնեց միութեան գոյատեւման ընթացքին կատարած հայ մշակոյթին նուիրուած աշխատանքներուն համար, մաղթելով երկար տարիներու գործունէութիւն:

Համերգին դաշնամուրային կատարմամբ ելոյթ ունեցան Աստղիկ Պէկլարեան, Լիզովէ Վերմոթ, Դաւիթ Տոնոյեան, ջութակի կատարմամբ՝ Արամ Պատալեան: Իր գեղեցիկ ձայնով օփերայի երգչուհի Սաթիկ Թումեան հնչեցրեց հայ եւ օտար երգեր:

2 Նոյեմբերի - Համպուրկի Հայ Մշակութային Միութեան նախաձեռնութեամբ, իրենց նոր հաւաքատեղիին մէջ կազմակերպուած էր տեղեկատուութեան օր մը, որու ընթացքին ելոյթ ունեցան ՀՀ Գերմանիոյ դեսպանուհի տիկին Կարինէ Ղազինեան, առաջնորդ Սրբազանն ու Կեդրոնական Խորհուրդի ատենապետ՝ տոքթ. Շաւարշ Յովասափեան: Բարաքանչիւր խօսնակ ամփոփ կերպով ներկայացուց իր պատկանած հաստատութեան գործունէութիւնը, ապա պատասխանեց ներկաներու հարցումներուն, լուսաբանելով բազմաթիւ հարցերը, որոնք կա՛մ չէին լաւ հասկցուած եւ կա՛մ թիրիմացութեամբ սխալ մեկնաբանուած էին:

9 Նոյեմբերի - Առաջնորդարանի Հայ Մշակոյթի Շաբաթներու շրջագիծին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Քէօլնի Մայր եկեղեցւոյ մէջ ձեռամբ Սրբազան Հօր: Արարողութեան աւարտին մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ մշակութային օրերուն իր մասնակցութիւնը բերած եւ այժմ յաւիտենականութեան պատկանող հայ եւ գերմանացի բարեկամներու հոգիներուն, ինչպէս նաեւ Հրէական Հոլոքոստին զոհուածներու հոգիներուն եւ վերջերս Պոլսոյ մէջ իր մահկանացուն կնքած երգահան Սիրվարդ Գարամանուկեանի յիշատակին:

Յետ Պատարագի Սրբազան Հայրը եկեղեցւոյ մէջ խօսեցաւ թրքահայոց Եկեղեցւոյ ու գաղութի մասին՝ տալով բազմաթիւ տեղեկութիւններ անցեալի ու ներկայի մասին: Ս. Պատարագին ներկայ էին նաեւ մեծ թիւով գերմանացիներ:

15 Նոյեմբերի - Քէօլնի Հայ համայնքի նախաձեռնութեամբ նշուեցաւ Վիլիամ Սարոյեանի ծննդեան 100-ամեակը:

Համայնքային սրահին մէջ հոծ բազմութեան մը ներկայութեամբ համայնքի երիտասարդները հանդէս եկան երաժշտական կատարումներով եւ ասմունքով՝ զլխաւորութեամբ համայնքի վարչութեան ատենապետուհի տիկին Մինու Նիքբէյի եւ երաժիշտ Արտակ Ոսկանեանի:

22 Նոյեմբերի - Քեօլնի Ֆլօրա անուն սրահին մէջ տեղի ունեցաւ “Fokolar Bewegung in K lin”-ի 50 ամեակին նուիրուած երեկոյթ: Միջոցառման հրաւիրուած էր նաեւ Գերմանահայոց թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեան: Ներկայ էին նոյնպէս Քեօլնի կաթողիկէ Եկեղեցւոյ կարտինալ Մայզներ, Յունաց Մետրոպոլիտ Ակուստինոս, Կաթոլիկ եւ Բողոքական Եկեղեցւոյ բարձրաստիճան հոգեւորականներ, քաղաքական գործիչներ եւ կուսակցութիւններու ներկայացուցիչներ:

Միջոցառման կազմակերպիչները կատարած էին հնարաւորը, որպէսզի յոբելինական երեկոն անցնէր բարձր մակարդակով: Ելոյթներէն եւ գեղարուեստական մասէն յետոյ, Գերաշնորհ Սրբազան Հայրը, Յունաց Մետրոպոլիտը, Ախէնի եպիսկոպոս Մուսինկոֆ, Բողոքական Եկեղեցւոյ եպիսկոպոսն ու անոնց հետ նաեւ բոլոր ներկաները միասնաբար միջեկեղեցական աղօթք բարձրացուցին առ Աստուած:

Նոյն օրը Քեօլնի Համայնքային սրահին մէջ տեղի ունեցաւ նկարներու եւ ժապաւենի ցուցադրութիւն մը Պեռլինէն Օրդ. Այտա Չափարեանի ու Նուպար Կէօտէլէքեանի միջոցաւ, Թուրքիոյ վերջին հայկական մնացած Վազըֆլար գիւղի մասին: Օրիօրդ Չափարեան ինք եւս Վազըֆլար գիւղի ծնունդ ու Ս. Խաչ Դպրեվանքի Ճանիք Չափարեանի զաւակն է, որ անձամբ իր տեսածն ու ապրածները գերմաներէնով պատկերաւոր ձեւով փոխանցեց ներկաներուն:

Առաջնորդարանի Հայկական Շաբաթներու վերջին միջոցառումը տեղի ունեցաւ Տոմֆօրումի մէջ եւ նուիրուած էր արեւմտահայ գրականութեանը:

Այս առթիւ տարբեր գրագէտներէն հատուածներ ներկայացուց Տոքթ. Բաֆֆի Քանդեան, ինչպէս նաեւ գերմաներէնով Դուք Մայեր՝ Համպուրկի պետական թատրոնի արուեստագէտներէն: Ներկայացումներու միջեւ իր մեցցօսփրան ձայնով Մեօնխէնկլատպախ քաղաքի օփերայէն Տիկին Սաթիկ Թումեան ներկաները առինքնեց հայկական երգերով:

23 Նոյեմբերի - Հանաուի մէջ տեղի ունեցաւ Հէսընի հայ Համայնքի Նախաձեռնողեան քերմէսը: Վարչութեան եւ Տիկնանց Յանձնախումբի կողմէ պատրաստուած քերմէսին ցուցադրութեան եւ վաճառքի դրուած էին Կաղանդի եւ Ս. Ծննդեան վերաբերեալ բազմաթիւ հայկական յուշանուէրներ:

Արդէն 3-րդ անգամ կազմակերպուող այս ձեռնարկին նպատակն է, որ հայեր եւ օտարներ առիթ եւ հնարաւորութիւն ունենան իրենց հարազատներուն եւ բարեկամներուն հայկական նուէրներ յանձնելու:

30 Նոյեմբերի Հոգեշնորհ Տ. Յարութիւն Աբեղայ Կիրակոսեան եւ Սայաթ Սրկ. Պոյաճեան մասնակցեցան միջեկեղեցական աղօթքի մը, որ տեղի ունեցաւ Քեօլնի Նիլ թա-

ղամասի հին Սուրբ Քաթարինա եկեղեցույ մէջ, Ս. Ծննդեան մսուրներու ցուցահանդէսի մը բացման առթիւ:

Նիւիլը Քեօլնի այն թաղամասն է, ուր նաեւ կը գտնուի Հայոց Առաջնորդանիստ Ս. Սահակ-Մեսրոպ Մայր Եկեղեցին: Արարողութեան իրենց մասնակցութիւն բերին նաեւ Կաթողիկ եկեղեցույ Սարկաւազ Պէրնտ Սանտէրը, թաղամասի Բողոքական Եկեղեցույ պատուելի Էպէրհարթ Մաթիսը եւ բազմաթիւ ներկաներ: Հետ արարողութեան եկեղեցույ սրահին մէջ կատարուեցաւ Ս. Ծննդեան մսուրներու ցուցահանդէսի բացումը:

Նոյն օրը Հէսընի Հայ Համայնքի կազմակերպութեամբ Հանաուի մէջ տեղի ունեցաւ հայաստանցի երգիչ Սամուել Գալստեանի համերգը: Երգիչ Գալստեան ներկաներուն հրաւցուց հայկական ժողովրդական եւ գուսանական երգերու գեղեցիկ ընտրանի մը: Համերգի ծրագիրը կներառներ գուսան Աշոտի, Շերամի, Շահէնի, երգահան Ալեքսեյ Հէքիմեանի եւ այլոց ստեղծագործութիւնները:

Համերգի աւարտին շրջանի Հոգեւոր հովիւ Սերովբէ Վրդ. Իսախանեան յանուն Համայնքի վարչութեան եւ ներկաներուն իր շնորհակալութիւններն ու օրհնութիւնները փոխանցեց երգչին՝ հայկական երգի գեղեցիկ երեկոյ մը հրամցնելու համար:

7 Դեկտեմբերի – Տարիների ընդմիջումից յետոյ առաջին անգամ Ախէնի մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Պէքճեանի ձեռամբ, առընթերակայ ունենալով Տ. Յարութիւն Աբեղայ Կիրակոսեանը, Սայաթ Պոյաճեան եւ Վահէ Թաշճը-լար Սարկաւազները:

Սուրբ Պատարագի աւարտին Սրբազանի Նախագահութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն Հայաստանի երկրաշարժի 20րդ տարեդարձի առթիւ ի յիշատակ երկրաշարժի զոհերուն:

Ապա Ախէնի նորակազմ համայնքը ընդունելութիւն մը կազմակերպած էր, որու ընթացքին ջերմ մթնոլորտի մէջ զրոյցներ տեղի ունեցան համայնքային անդամներուն միջեւ:

Նոյն օրը Հէսընի հայ Համայնքին մէջ ի Հանաու, տեղի ունեցաւ յուշ-երեկոյ մը՝ նուիրուած 1988 թուականի Հիւսիսային Հայաստանի ահաւոր երկրաշարժի 20-րդ տարելիցին:

Նախ Սերովբէ Վրդ. Իսախանեանի կողմէ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն ի յիշատակ բիրաւոր զոհերու: Հայր Սուրբը իր խօսքին մէջ անդրադարձաւ 20 տարի առաջ տեղի ունեցած Երկրաշարժին, անոր ծանր հետեւանքներուն, շնորհակալութեամբ յիշեց, որ այդ ծանր օրերուն աշխարհը եւ մանաւանդ գերմանացի ժողովուրդը սրտակից եւ բաժնեկից եղաւ հայոց վշտին՝ բերելով իր բարոյական եւ նիւթական մասնակցութիւնը երկրաշարժի հետեւանքներուն վերացման համար:

Այնուհետեւ ներկայիս Գերմանիա բնակող հայաստանցի երաժիշտներ Վարդենի Դաւիթեանի եւ Պետրոս Սարգսեանի կատարմամբ հնչեցին կարգ մը հայկական հոգեւոր ու աշխարհիկ երգեր, ինչպէս՝ «Կոունկ», «Հայրիկ-Հայրիկ», «Տէլ Եաման», «Սուրբ, Սուրբ», «Ամէն, Հայր Սուրբ» եւ այլն:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ